

ալ իրենց մեռեալները կը թաղեն նոյն հայկական զերեզմանավայրին մէջ, այդ օքք անոնց եկեղեցական զասերն եւս, իրենց ժողովուրդներուն հետ ի միասին, մենէ առաջ, եկած էին օրմնել իրենց նընշցեալներու հողակոյտերը:

● 28 Յունիս. կիր. Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Յարութեան տաճարի հայկական հողգործայի վերնայարկ մատուլախն մէջ. ժամարարն էր Տ. Նորայր Վրդ. բարովց Տ. Միռն վրդ. «Երանի այնոցիկ» որ սուրբ են սրափւր, զի նորա զԱստուած տեսացնա աւետարանական բնարանին վրայ, բացատրեց թէ զևսառած տեսնելու, այսինքն իր հոգին Աստուեցոյ հոգեցն հետ իրական յարաբերութեան մէջ պահելու համար անհրաժեշտ է սրափ մարրութիւնը, որ հիմն է առաքինական կեանքի:

Նոյն օքք, երեխյին, Հռիփիսիմեան կուսանաց յիշասակին նախատօնակր կատարուեցաւ, ըստ աւանդական սովորութեան, Ս. Հրեշտակապետաց վանոց տաճարին մէջ, ուր Միարանական հոմզիսաւոր երթ կատարուեցաւ նախազանութեամբ Ս. Պատրիարքին. ուր Միարանութիւն եւ ժառանգաւորք սրտաթունդ երգեցին Կոմիտաս կաթողիկոսի անման պլնծինը նորիքեալուր:

● Յաջորդ օքք, 29 Յունիս, թշ. Ժամերգութիւն եւ Ս. Պատարազ տեղի ունեցաւ Ս. Հրեշտակապետաց վանոց Ս. Հռիփիսիմեանց խորանին առ չեւ. ժամարարն էր Տ. Գէորգ Վրդ. յետոյ ընդունելութիւն եղաւ Տիսչին պաշտօնատունին մէջ:

● Յուլիս 1 ուր, երեխյին, Ս. Յակոբիսանց տաճարին մէջ «Եղն ի վիրապէն» տօնին առ թիւ կատարուեցաւ հանդիսաւոր նախատօնակ. և արարոդութիւն համրուրման նշանարաց Ս. Լուսուորչին:

● Յաօրդ առաւօտ, Յուլիս 2, թշ. Նոյն տաճարին մէջ հանդիսաւոր կերպով խմբուեցաւ Ս. Լուսուորչի տօնին Յաքալից Ս. Սունդանոս մատարան Ս. Լուսուորչի խորանին առ չեւ, Ս. Պատարազը մատոյց Տ. Գէորգ:

● Յուլիս 3, կիր. (Տօն Կաթողիկէ եկեղեցւոյ Ս. Էջմիածնի). Ս. Յակոբիսանց տաճարին մէջ Ս. Պատարազը մատոյց Տ. Կիւրեղ Վրդ. Ս. Պատրիարքը բարովց պատրիարքական Աթոռէն. Առարել Դարիթեցին «Ի վերայ աջոյն եւ Էջմիածնի կապեալ կայ ամենայն ազգն Հայոց» խօսրն առնելով բնարան, բացատրեց Ս. Էջմիածնի պատմական, կրօնական և քարոյական նշանակութիւնը հայ կեանքին մէջ, իրարեւ զանձնարան անցեալ նորիքական յիշասակներու, իրարեւ ներշնչարան ապազայի հոգեւոր յոյսերու, եւ իրարեւ խորհրդանշանական զօրութիւն Հաւատրի եւ ազգային սրբութեանց:

### ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

● Իր հառանօտեայ այս եւելոյութեան ընթացին, Ս. Արուոյս ՌԱՍՈՒՄԵԱԿԱՆ ԽՈՐԻՆՈՒՐ եւ կու անզամ զումառուեցաւ, զբաղելով ժառանգութաց կանոնագրի վերանայութեան եւ մատենադարանի եւ Միօնի եւ Տպարանի վերաբերեալ հարցենով:

● Նորաւէն Մատենադարանի վիեմերուց դասաւորման եւ ցուցակագրութեան զործը յառաջ կը տարուի կանոնագրական:

● Աւրախ ենի նախորդելով թէ Ս. Արուոյս սպառն պատուական ազգայինի մը բաւերառութեամբ ի մօսոյ պիտի օճառի արազատիոց եւ յարակից ուրիշ եկեղեցաւուներով:

● Նախիրնեաց շարքու մէջ բացուեցաւ նոզելոյս Տ. Եղիսէ. Ս. Պատրիարքի ՃԵԿԱԳԻՒԹԵԱՐՈՒՅ արկադ. Ս. Պատրիարքը անձամբ կատարեց պատուանկութեան պատրապութիւնը եւ ցուցակագրութիւնը. Աւումնական հորենուրը ի մօսոյ պիտի տնօրինէ կատեւոր՝ անձիշապէս երաշաւակէի զարծեւուն սպազութեան նամար:

### Տ Ե Բ Ո Ւ Ն Ի

«Սիոն» խորին տիսրութեամբ կ'արձանագրէ արդի հայ գրականութեան ամէնէն արդիւնաշատ մշակներէն Ճ. Արսէն վ. Ապիկիւանի աշնակնկալ մահը, որ առզի ունեցած է վենետիկի մէջ Յունիս 9 ին:

Հ. Արսէն, բնիկ Պարտիզակցի, հայերէն լեզուի իր ուսուումն ըրած է հոգելոյս Դուրեհան Ս. Պատրիարքի խնամքին առկ, երբ ան քարոզիչ էր այդ հայկական գիւղին մէջ, և չափահան էր արդէն, երբ ընդունուեցաւ Վհնեստիկի Միսիթարեան Միարանութեան մէջ, ուր արագօրէն յառաջացաւ և հոչակուեցաւ իրեւ ուսուցիչ, խմբագիր, մատենագիր և թարգմանիչ, իր երեսումը գրականութեան գաշտին վրայ, պահ մը կարծել տուաւ շատերուն թէ ինքը կոչուած էր աշխարհաբարի մարզին մէջ հանդիսանալու այն՝ ինչ որ եղած էր, իրը զար մը առաջ, իրեն համանուն և միարանակից տիտանը, անմոռանալին Հ. Արսէն Բագրատունի, զրաբարի մարզին մէջ: Եթէ բացատրելի հանգամանքներ և մահը, որ այսպէս շուտով կորպից զինքը իր աշխատութեանց ապարէզէն, չմոյլաբերցին որ իրականանայ իր մասին տածուած այդ յոյսը, պէտք է խոսուալին սակայն թէ հակայական և մեծարժէք եղաւ ժառայութիւնը: զոր ան մատոյց մեր արզի հայերէնին: իր քերթողական մատենաշառը, որուն մէջ են ինը ու նոր զասական եւ գեղեցիկ բանաստեղծութեանց լաւագոյն գործերը: իր Մատենագիտութիւնը, որուն երկրորդ տպագրութիւնը, մասնաւորապէս, կոչուած էր մատենագրական Համայնագիտարան մ'ըլլալու, և որ կը մնայ այսպէս անաւարտ, կը կնապէս աւազելի կը դարձնէ իր մահը: Աշխոյժ, հմտութացիր և իրապէս համակրելի այս Միսիթարեանը պէտք էր որ ապարէ էր որ ապրէր տակաւին ազգին ու հայ գրականութեան օգուտին համար . . . :

«Սիոն» երուսաղէմի Միարանութեան սրտագած ցաւակցութիւնը կը ներկայացնէ Վհնեստիկի Պատ. Միսիթարեան Միարանութեան և հանգուցելոյն ընտանեկան պարագաներուն, մազթելով հանգիստ հոգւոյ ոգբացեալին: